ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 30-ին կնքված ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-1/1» ծածկագրով պայմանագրում 2018 թվականի հունիսի 06-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Մեկ տրանսպորտային միջոցի ավելացում:
Փոփոխության նկարագրություն՝	Մեքենաների թվաքանակը ավելացվել է 1-ով, գինը՝ 46 946 դրամ:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **ՀՀ բնապահպանության նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«30» մարտի 2018թ. թիվ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-1/1 պայմանագրի

ք.Երևան «05» «06» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Գ.Գրիգորյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 30-ին կողմերի միջև կնքված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-1/1» ծածկագրի պայմանագրի 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2018 թվականի մարտի 30-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-1/1» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. Պայմանագրի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում, «20» թիվը փոխարինել «21» թվով.

1.1.2. Պայմանագրի 4.1 կետում **«754 000 (յոթ հարյուր հիսունչորս հազար)»** բառերը փոխարինել **«800 946 (ութ հարյուր հազար ինը հարյուր քառասունվեց)»** բառերով.

1.1.3. Պայմանագրի վճարման ժամանակացույց հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1570003731650100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02589581
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Գ.Գրիգորյան***
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«05» «06» 2018թ. կնքված
համաձայնագիր №1
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/01-1/1 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն
Գ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	66511170	ՀՀ բնապահպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայություններ (ԱՊՊԱ ծառայություն)	-	-	-	754 000	754 000	800 946	800 946	800 946	800 946	800 946	800 946	800 946	800 946	**800 946**